29. ԱԼԵՔՍԻ

Կէղի, չէղի թագավորմ կեղի. թագավորին ոզիրմ կէղի։ Ոզիրին տղեմ կէղի, անուն Ալեքսի։

Թագավորին լէ շատ խորոտիկ ախչիկմ կէղի՝ Սյուրեաթ խանըմ անունով։

Թագավոր ոզիրին կըսա.— Ես, գու խնամի կէղինք, իմ ախչիկ քու տղին կիտամ։

Իրարու խոսք կիտան, խնամի կէղին։

Ոզիրի տղեն, թագավորի ախչիկ խրտ իրար վարժատուն կէրթան, կկարթան։

Ոզիր կմեռնի։ Ոզիրի տղեն կախքտնա։ Մի էրկու-իրեք անգամ ոզիրի տղեն մարթ կճամփա, թե՝ «Ես պիտի պսակվիմ»։

Թագավոր ախչիկ չի տա։ Ոզիրի տղեն ախչկան կըսա թե.

— Քու խեր, քըզի ընձի չի տա։

Ախչիկ կըսա.— Մե չաքմաչե մի շիքա՛, ընձի ճամփա։

Ոզրի տղեն նաչրի (հյուսն) մոտ կէրթա, նաչրին կըսա.

— Մե ճոչ չաքմաչե մի ընձի չիքա։

Նաչար մե ճոչ չաքմաչե մի կշիքա։ Ոզիրի տղեն չաքմաչեն ախչկան կճամփա։ Ախչիկ կըսա չաքմաչա տարողին.

— Իրիկուն սահաթի տասվերկսին մշակմ թըխ ճամփի ոզիրի տղեն, չաքմաչեն շալկա տանի իսքելեն (նավահանգիստ), ինքն էլ իգա ընձի գնա գամին, իմ խոր քաղքեն տանի։

Սահաթ տասվերկսին մշակմ ճամփեց, չաքմաչեն իսքալեն

բերեց։ Ոզիրի տղեն վերուց չաքմաջեն, գամին դնեց։ Ինքն էլ նստավ գամին, թագավորի քաղքեն գացին։

Քամի էլավ, ծով ալակոծում էղավ, գամին տարավ քարիմ զարկեց։ Գամին քարին քիսավ, բաթմիշ էղավ։ Ախչկա չաքմաջեն ծովու էրեսին ընգավ։ Գնա՜ց, ծովու մեկ քընար (եզր) դուս տվեց։

Մե տղե մի գացեր էր ծովի ափ կըռշ (վառելիք) կժողվեր։ Տղեն չաքմաջեն տեսավ, չաքմաջի մոտ գնաց, չաքմաջի բերան ուզեց բաներ, ախչիկը բացեց չաքմաջից էլավ։

Ախչիկ աղին ըսաց.— Խաց կա՞ քու մոտ։

Տղեն ըսաց.— Խա՜, էրկու խաց կա իմ մոտ։

Ախչիկն ըսաց.— Էրկու խաց ընձի տու։

Տղեն էրկու խացն տվեց, ախչիկ խաց կերավ։

Տղեն ըսաց.— Ելի՜, մեր տուն էրթանք։

Ախչիկն ըսաց.— Քըզի քուր ա, մամ ա, չկա՞։

Ըսաց.— Կա։

Ըսաց.— Ես քու խետ չըմ իգա, ամոթ ա, գնա, քու մամուն, քու քուրոջ ըսա, թը գան, ընգնին իմ կշտեն, էրթանք։

Տղեն ուրախնալով տուն վազեց։

Ախչիկն մտավ չաքմաջի մեջ, զինք ծով թալեց։ Տղեն գնաց ուր մամուն ըսաց.

— Ծովու ափ մի ախչիկմ եմ տեսի, ե՛լի առ քու ախչիկ, էրթանք էն ախչիկ ընձի բերենք։

Տղեն, ուր մամ, ուր քուր, իրեք խըտ իրար ծովափ էկան։ Տեսան ախչիկ չկա։ Տղեն էդ դիից մոր ըսաց.

— Էլ ես ձեր տուն չըմ իգա, ես կէրթամ, ախչիկ դտիմ։

Տղեն էդ դիից մորից կտրավ, ճամփա ընգավ։

Ախչիկ էդ դիից ծովու մեջ դնաց, մի ուրիշ դեմի ծովուն ափ տվեց։ Խովիվմ էդտեխ օխշար ակրատ (նախաճաշ) նստըցուցեր էր։ Խովիվ տեսավ ծովու վրեն մե չաքմաջեմ կար։ Խովիվ գնաց չաքմաջեն բերեց, ուզեց դուռ բանալ։

Ախչիկն ըսաց.— Չաքմաջեն մի կոտրե, ես դուռ բաց կէնիմ։ — Ախչիկ դուռ բացեց, չաքմաջից դուս էկավ։ Խովվուց հաց ուզեց։ Խովիվ հաց տվեց, օխշար կթեց, կաթ էլ տվեց։ Ախչիկ խացն ու կաթ կերավ։

Խովիվ ըսաց.— Ես քըզի կառնիմ։

Ախչիկն ըսաց.— Ես էլ քըզի կառնիմ։ Մամ ու քուր չունի՞ս։

Խովիվ ըսաց.— Ունիմ։

Ախչիկ ըսաց.— Ես օխչրին մուղաթ կկենամ, գնա քու մամուն, քրոջ ըսա, թ՝իգան ընձի տանին։

Ախչիկ էդ խոսքեր օր ըսաց, խովիվ շատ ուրախցավ։

Խովիվ ըսաց.— Լա՜վ, օխչրին մուղաթ կեցիր։

Խովիվ գնաց։ Գնաց տուն խասավ, մոր ըսաց.— Մե խորոտ ախչիկմ եմ գտե ծովի ափ։ Էլի իմ քուրոջ ըսա, գուն, քուր արեք, էն ախչիկ ընձի բերեք։

Խովիվն, ուր մամն, ուր քուր խըտ իրար էկան օխչրի մոտը։ Ախչիկն չգտան։ Ախչիկն մտեր էր չաքմաջեն, գացեր էր։

Խովիվն էդ տեխ մոր ըսաց.— Էլ ես ձեր տուն չըմ իգա, կէրթամ ախչկան կզվոնիմ։

Խովիվն էլ ընգավ ճամբախ, գնաց օր ախչիկ գտեր։

Ախչիկ էդ դիից կէրթա ուրիշ դեմի գելի ծովու ափ, քառսուն խատ արաբ չաքմաջին ռաստ գուգան։ Չաքմաջեն կկոտրեն, ախչիկ չաքմաջից կխանեն, ախչիկ ուրանց խետ կտանին։ Կտանին ուրանց տուն։ Եռսունևին ախչիկ լէ ուրիշ ա բերած։

Արաբներ կըսին. «Ախչիկ լէ էղավ քառսուն, մենք լէ՝ քառսուն։ Լուսուն ամենքս մեկ առինք, պսակվինք»։

Հարսնքի պատրաստութուն տեսան։ Թագավորի ախչիկ ըսաց.

— Դուք մարթիք ծիավոր եք, ծեր շորեր տվեք մենք լէ խաքինք, մենք լէ խեծինք ծիանք, տեսինք մենք լէ մեզի կենա՞նք ծիու վրեն բռնենք։

Արաբների ճոչն ըսաց.— Շատ աղեկ կըսա։

Բերեցին քառսուն արաբ լէ ուրանց շորեր ախչկներուն խաքուցին։ Ախչիկներ շորեր խաքան, էլան ծիանք խեծան։

Թագավորի ախչիկ մեկել ախչկներուն ըսաց.— Ընչի՞ մենք մնանք արաբների մոտ, էլ արաբներ մըզի չխասին, էրթանք մեր խոքին արաբներուց ազատենք։

Ախչիկներ լսին թագավորի ախչկան, հ՝ըմեն մեկ տեխ ըսին. «Դու դինաս, գու մեր ճոչ, ի՞նչ ըսես, քըզի կլսենք»։

Էդ ըսելուց վերջ, խանչին ուրանց աստված, արաբներուն ըսին. «Մնաք բարով»։

Արարներ մնացին շիվար։ Ախչկներ ծիանք քշեցին։

Շատ ու քիչ աստված գինա, ինչքան գացին, մե ճոչ քաղքի մի ռաստ էկան։ Քաղքի մեջ էրթըլով, քաղքի թագավոր մեռեր էր, քաղքի ժողովուրդ քոմած ին, մե տե մի։ Դովլաթ ղուշի կթորկին, վի՜ գլխուն իշի, զէնի կէնին թագավոր։

Դովլաթ-ղուշին թորկին, էկավ թագավորի ախչկա գլխու վրեն իջավ։

Բերեցին թագավորի ախչիկ էնին ուրանց թագավոր։

Թագավորի ախչիկն քաղքի մեջ մե ախպուրմ շիքեց, ուր սուրիեթ թասի մե մեջ քաշեց, էդ ախպրի մոտեն կախեց, էրկու հատ կարավուլ ախպրի վրեն դնեց։

Կարավուլներուն ըսաց.— Ո՞ն կիգա էս թաս ծեռ կառի, ճուր կխմա, օր «Ա՞խ» էնեց, կբռնեք, ընծի կբերեք։

Մե ժամանակմ էդմալ մնաց, ոզիրի տղեն էկավ էդ քաղաք։

Ոզիրի տղեն, գամին օր բաթմիշ էղավ, տախտկի մը վրեն մնաց։ Տախտակ ծովու էրեսին ընգավ, գնաց մե դենըմ դուս էկավ։ Էդգից զվռնա՞վ, զվռնավ, էկավ թագավորի ախչկա քաղաք։ Քաղքի մեջ մտավ, գնաց էն ախպրի վրեն, թաս վերուց, լցեց ճուր, խմեց, աչքն առավ էդ սուրիեթ, «ախ»-ըմ էնեց։ Կարավուլներ էտոր բռնեցին. «Արի, թագավոր քըզի կկղանչա»։ Ոզիրի տղին տարան թագավորի մոտ։

Կարավուլներ կըսին.— Թագավոր ապրած կենաս, էսա մարթ քու շինած ախպուր ճուր խմեց, «ախ»-ըմ էնեց։

Ըսաց.— Տարեք էդոր մե լավ հ՝օդե մի դնեք, լավ խաց կկերցուք։

Մեկել օրը կարավուլներ տեսան օր կըռշ ժողվող տղեն էկավ էղա քաղաք, էդ ախպուր գնաց, թաս ձեռք առավ, ճուր լցեց, խմեց։ Սուրիեթն օր տեսավ, «ախ»-ըմ քաշեց։ Կարավուլներ բռնեցին էդ տղի ծեռ. «Արի, թագավոր քըզի կկղանչա»։

Տղին մոտ թագավոր տարան, ըսեցին.— Էսա մարթ քու շիքած ախպուր ճուր խմեց, «ա՞խ» քաշեց։

Թագավորն ըսաց կարավուլներուն.— Էտոր լէ կտանիք խորոտ հ՝օդե մը կգնաք։

Էդ մարթուն լէ տարան, խորոտ հ՝օդե մի գնեցին։

Կարավուլներ գացին ախպրի մոտ։ Մեկել օր տեսան խովիվն էկավ էդ քաղաք։ Գնաց էդ ախպրի վրեն, թաս ծեռք առավ, ճուր լցեց, խմեց, սուրիեթն օր տեսավ «ա՞խ»-ըմ էնեց։

Կարավուլներ բռնեցին, ըսին. «Թագավոր քըզի կկղանչա»։ Տարան թագավորի մոտ, ըսին.— Թագավո՞ր, էսա մարթ քու շիքած ախպուր ճուր խմեց, «ա՞խ»-ըմ էնեց։

Թագավոր ըսաց.— Էդոր կտանիք հ՝օդե մի գնաք։

Կարավուլներ վերցին էդոր տարան հ՝օդե մի դնին։

Կարավուլներ գացին ախպրի մոտ կանան։ Տեսան էն մեկել

օր քառասուն մարթ խրտ իրար էկան ախպրի վրեն, ճուր խմեցին, խրտ իրար «ա՜խ» քաշեցին։

Կարավուլներ բռնեցին, ասեցին՝ «Թագավոր ձեզ կկղանչա»։ Տարան թագավորի մոտ, ասեցին.— Էսա մարթիկ խրտ իրար «ա՜խ» քաշեցին։

Թագավոր ասաց.— Տարեք էգոնց նեղ տեղ մի դնեք։

Տարան էդ մարթկոց նեղ տեղ մի դնին։

Ճամփեց, ողիրի տղին բերեց։

— Այ մարթ,— ասաց,— դու ընչի՞ էգ ախպրի վրեն «ա՜խ» քաշեցիր, դրուստ չասես, քու վիզ կիտամ զարկել։

Ասաց.— Թագավոր, ընչի դրուստ չեմ ասի։ Ես էլ ողիրի տղա եմ, իմ հոր թագավորին ախչիկմ կար, իմ հոր թագավորը իմ հոր կըսա թե. «Իմ ախչիկ, քու տղա Ալեքսին կիտամ». իմ հեր կըսա թե. «Թե դու կիտաս, ես էլ գուզիմ»։ Էդպես խնամի կէղին։ Էդտեխ երկեն ժամանակ չքշա, իմ խեր կմեռնի։ Ես ու թագավորի ախչիկ խրտ իրար կկարթինք։ Իմ խեր օր մեռավ, մենք աղքրտցանք, մի էրկու իրեք անգամ մարթ ճամփի, թագավոր ասաց. «Էնի ախրատ ա, ես իմ ախչիկ էնոր չըմ իտա»։ Թագավորն ուր ախչիկ չտվեց, ես ախչկան ասի. «Քու խեր քըզի ընձի էլ չի տա»։ Ախչիկն ասաց. «Մե խորոտ չաքմաչե մի ինձի շիքա»։ Ես գացի նաչրի մոտ, չաքմաչե մի շիքեցի, չաքմաչեն ախչկան ճամփի, ախչիկ մտավ չաքմաչեն, սահաթ տասվերկրսին մշակըմ ճամփի, չաքմաչեն իսքալեն բերեցի, գնեցի գամին, ելանք գամին. գամին թորկեց, քամին էլավ, ծով ալեկոծում էնեց, զգամին տարավ, քարին զարկեց։ Գամին բաթմիշ էղավ, ես մե տախտկի վրեն մացի, սևութուն (ցամաք) ելա։ Ախչկա ետև կզվռնիմ. էկա էս քաղաք, էդ ախպուր ճուր խմի, էդ ախպրի թասին սուրիեթմ կար, կմըներ էն ախչկա սուրիեթ։ Ես էն ապով «ա՜խ» քաշեցի։

Ասաց.— Դու ազատ ես, դու մեղք չունիս։— Թագավոր Ալեքսիին ուր մոտ նստրցուց։

Ճամփեց, էն կրոշ ժողվով բերեց, խարցրեց։

— Այ մարթ, ընչի՞ էն ախպրի վրեն ճուր խմեցիր, «ա՜խ» էնեցիր,— ասաց,— դրուստ ասա, թե դրուստ չըսես՝ քու գլոխ կղարկիմ։

— Ես մի ախքատ մարթում տղա ի, վառելիք չունինք, գացի ծովու ափ, կրոշ ժողվի։ Չաքմաչեմ գտա, ես շատ ուրախցա, չաքմաչեն վերցի, ուզեցի օր դուռ բանի, ախչիկմ մեջեն ձեն տվեց, ասաց. «Մի կոտրի չաքմաչի դուռ». ախչիկ չաքմաչի դուռ բացեց,

19—1086

դուս էլավ։ Շատ խորոտ ախչիկմ էր. ընձի ըսաց. «Խաց կա՞ քու մոտ»։ Ես ըսի թե, էրկու խաց կա իմ մոտ։ Խանեցի, էրկու խաց ախչկան տվի։ Ախչիկ խաց կերավ, ըսի. «Ելի էրթանք մեր տուն»։ Ախչիկն ըսաց. «Քըզի մեր, քուր չկա՞»։ Ես ըսի. «Կա, գնա քու մամն ու քուրոջ ըսա թ՝ի գան ընձի տանին»։ Ես գացի իմ մոր, իմ քուրոջ ըսեցի։ Ես, իմ մամ, ու քուր, իրեք ելանք էկանք, ախչիկ չըկար։ Ես իմ մամուն ըսեցի. «Մեր տուն չիգամ, ես կերթամ զվռնիմ, ղախչիկ գտիմ»։ Ես զվռնեցի, զվռնեցի էկա ըս քաղաք, ախպուր ճուր խմեցի, թասի մեջ սուրիեթմ տեսա, մաներ էն ախչկա սուրիեթ, էն ապով «ա՜խ» էրեցի։

Թագավոր ըսաց.— Դու լէ մեղք չունիս։— Կղանչեց ուր լալին, ըսաց.— Բան մը փարա տու էգ մարթուն, թի էրթա։

Լալեն գնաց բան մի փարա բերեց, տվեց էդ մարթուն։ Մարթ էլավ գնաց։

Ճամփեց խովիվ բերեց, խովվուց խարցուց թե.— Դու ի՞նչ մարթ ես, օր էկար ախպուր ճուր խմիր, «ա՜խ» քաշիր։ Դրուստ չասես, քու գլոխ կղարկիմ։

Ըսաց.— Ես մե խովիվ իմ, ակըրտին օխչար նըստցուցեր ի, տեսա ծովու վրեն չաքմաջեմ էրևաց։ Գացի, չաքմաջեն բերի, էնի օր չաքմաջի դուռ բանի, ախչիկմ չաքմաջի մեջեն ծեն տվեց. «Չաքմաջի գուռ մի կոտրի», ըսաց։ Չաքմաջի դուռ բացեց, դուս էկավ մե խորոտ ախչիկմ։ Ես օր ախչիկ տեսա, շատ ուրախցա։ Ախչիկ խաց ուզեց, խաց տվի, էլա օխչար կթի, կաթ տվի, խաց ու կաթ կերավ, ըսի. «Էլի էրթանք մեր տուն»։ Ախչիկն ըսաց. «Մամ չունի՞ս, քուր չունի՞ս». ես ըսի՝ կա։ Ախչիկ մնաց, օխչրին մուղաթ կեցավ, ես գացի մեր տուն, իմ մամուն ըսի, գնա իմ քուրոջ ըսա։ Իմ մամն ու իմ քուր, ես էկանք, ախչիկ չկար։ Ես իմ մամուն ըսի. «Էլ ես ծեր տուն չիգամ, կէրթամ ախչիկ գտնելու»։ Էն օրվընե զվռնելով էկա էս քաղաք, ախպրի վրեն ճուր խմա, թասի մեջ սուրիեթմ կար, կմաներ էն ախչկա սուրիեթ, էնոր ապով «ա՜խ» էրեցի։

Ըսաց.— Քեզ մեղք չկա։ Կղանչեց լալեն— գնա՛, բանմ փարա պե տու էդ մարթուն։

Լալեն գնաց, բանմ փարա բերեց, տվեց խովվին, խովիվ էլավ ճամփա գնաց։

Թագավոր կղանչեց քառսուն արաբին, ըսաց.— Դուք ինչի՞ «ա՜խ» էնեցիք, դրուստ չասեք, ծեր վիզ կղարկիմ։

Քառսուն արաբի ճոչ ըսաց.— Մենք, էս քառսունս կաչախու-

թուն կէնինք։ Մենք եռսունևին խորոտ ախչիկ բերեր ինք։ Օրմ էլ ելանք գացինք ծովի մի ափ, մե չաքմաջե մի տեսանք։ Չաքմաջեն կոտրեցինք, խորոտ ախչիկմ չաքմաջի միջից ելավ, ըսինք. «Օ՜հ, աղեկ էղավ, մենք քառսուն մարթ, էղան քառսուն ախչիկ»։ Առանք էկանք մեր տուն։ Էն լուսուն ուզինք օր պսակվինք։ Էդ չաքմաջի միջի ախչիկ ըսաց. «Դուք մարթ ծիավոր եք, ծեր խաքուստներ մըղի տվեք, մենք խաքինք, մենք լէ ծի խեծինք, տեսինք մենք լէ կենա՞նք էղինք ծիավոր»։ Ես ելա ըսեցի՝ «Աղեկ կըսա»։ Մեր շորեր տվինք խաքան, ծիանք խեծան, մըղի ըսին՝ «Մնաք բարով», ուրանք ճամփա ընգան։ Մենք լէ ընդեր ինք ետև զվռնելով, ըս քաղաք էկանք։ Ախպրի վրեն գացինք, թաս առանք, ճուր խմինք, էդ ախչկա թասի միջի սուրիեթ օր տեսանք, մենք էն ապով «ա՜խ» էրեցինք։

Թագավոր կղանչեց ջալադին։ Ջալադն էկավ, հրաման էնեց, թե.— Էդոնց գլոխ զար։

Արաբներու գլոխ զարկեց։ Դարձավ Ալեքսուն ըսավ.— Ալեքսին, տեսա՞ր, ես էն Սուրիեթ խանըմն եմ, թագավորի ախչիկ, իմ գլխու գալածն տեսա՞ր, ընձի կառնի՞ս։

Ալեքսին ըսաց.— Օր քըզի չառնի, ընչի՞ քու ետև կզվռնի։

Հարսընքի պատրաստուն տեսավ։ Յոթ օր, յոթ գիշեր հարսնիքն էրեց։ Առավ Ալեքսին։ Ալեքսին թագավոր էրեց։

Երկնուց իջավ իրեք խնձոր, մեկ ասողին, մեկ լսողին, մեկ փայ էնողին։